ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ,
ԱՆԴԱՄՆԵՐ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ,
ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ,
ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ ավագանու անդամներ,

ի պատասխան Ձեր 18.06.2025թ. հ.144-2025թ. գրության՝ Նուբարաշենի 2-րդ փողոցի բնակիչների տրանսպորտային սպասարկման խնդրի վերաբերյալ, տեղեկացվում է, որ չնայած նոր ավտոբուսների ներկրման ուղղությամբ վերջին տարիներին կատարված աշխատանքներին, Երևան քաղաքի ավտոբուսային պարկը դեռևս վերջնականապես համալրված չէ, որի արդյունքում առանձին երթուղիներ շահագործվում են սահմանված քանակից պակաս շարժակազմերով և դեռևս չի ապահովվում դրանց կանոնավոր սպասարկումը:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացվում է, որ Նուբարաշենի 2-րդ փողոցի տրանսպորտային սպասարկման նպատակով ավտոբուս տրամադրելու հնարավորություն ներկա պահին չկա:

Միաժամանակ տեղեկացվում է, որ բարձրացված հարցի կարգավորման հնարավոր տարբերակները կդիտարկվեն ավտոբուսների նոր խմբաքանակների ներկրման և նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակում իրականացվելիք աշխատանքների ընդհանուր համատեքստում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ